

**ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՀՀ-03-2022**

ք. Երևան

« 11 » մարտի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող՝ ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ «Նվիրատու»), ի դեմս Նվիրատուի կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Մ. Մարգարյանի, մի կողմից և «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ «Նվիրառու»), ի դեմս կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Կարեն Ղազարյանի, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին գումար հատկացնելու մասին» N 201-Ն որոշման (այսուհետ՝ «Որոշում») պահանջների, Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի 08 բաժնի 02 խմբի 05 դասի 1168 Արվեստների ծրագրի «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի կարողությունների զարգացում» 32006 դասիչով միջոցառման շրջանակներում և «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի կարողությունների զարգացման (այսուհետ՝ «Միջոցառում») նպատակով, Նվիրատուն սեփականության իրավունքով Նվիրառուին անհատույց հատկացնում է 253 320 000 (երկու հարյուր հիսուներեք միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ գումարի չափով դրամաշնորհ (ներառյալ ԱԱՀ-ն)՝ սույն պայմանագրի N 3 հա-

վելվածով («Վճարման ժամանակացույց») սահմանված ժամկետներում: Դրամաշնորհի գումարի մինչև 115 260 000 (հարյուր տասնհինգ միլիոն երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը, Նվիրատուն փոխանցում է Նվիրառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար (բանկային երաշխիք 11.03.2022թ. N EA22/00083 և 11.03.2022թ. N EA22/00084):

1.2 Միջոցառումն իրականացվելու է սույն պայմանագրի N 1 հավելվածի («Տեխնիկական բնութագիր») պահանջներին և N 4 հավելվածի ծախսային նախահաշվին համապատասխան:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Նվիրառուի կողմից Միջոցառման իրականացման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Նվիրառուի գործունեությանը,

2.1.2 չընդունել Միջոցառման արդյունքները՝ սույն պայմանագրի N 1 հավելվածով («Տեխնիկական բնութագիր») կամ այդ Միջոցառման իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին դրանք չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և Նվիրառուից պահանջելով վճարել սույն պայմանագրի 4-րդ կետով նախատեսված տուգանքը:

2.2 Նվիրատուն պարտավոր է՝

2.2.1. կատարել Միջոցառման իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.2.2 ընդունել սույն պայմանագրի N 1 հավելվածի («Տեխնիկական բնութագիր») պահանջներին համապատասխան իրականացված Միջոցառման արդյունքները՝ համաձայն Նվիրառուի կողմից ներկայացված Միջոցառման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրության (հավելված N 2), իսկ դրանցում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Նվիրառուին,

2.2.3 Միջոցառման իրականացման համար Նվիրառուին վճարել սույն պայմանագրով սահմանված գումարը՝ համաձայն N 3 հավելվածի (վճարման ժամանակացույց):

2.3 Նվիրառուն իրավունք ունի՝